№ 46 Հինգշաբթի Ապրիլի 30 1887 Հինգշաբթի Ապրիլի 30 № 46

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՑ 1887 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն ոգովորամայով։ Մենք ստանում ենք տեղական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» *տարեկան գինը* 10 *ռուբլի է, վեց ամսվանը* 6 *ռուբլի։*

Գրվել «ՄՇԱԿԻՆ» *կարելի է* ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (*Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տունը։*)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» *գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Ինչպէս ենք ստանում մեր հասարակական գործիչներին.—*ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· *Նամակ Երևանից.* Նամակ Մօսկվայից· ՆԵՐՔԻՆ ԼՐԵՐ.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· *Ֆրանս-Գերմանական յարաբերութիւնները.* Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ·— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ· — ԲՕՐՍԱ· — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԱՐԱԿԱՆ· *Մի ակնարկ ժընեվ կանտոնի տարրական ուսումնարաններին.*

ԻՆՉՊԷՍ ԵՆՔ ՏՕՆԱԽՄԲՈՒՄ ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ

—

*Ոչինչ գուցէ այնքան օգնորող և սիրուիչ չէ, որքան այն հրապարակական ցոյցերը և համակրութեան նշանները, որ մի հասարակութիւն արտայայտում է դէպի իր գործիչները՝ տօնելով նրանց երկարամեայ գործունէութիւնը։ Երկար տարիներ ծառայելով ժողովրդի մտաւոր կեանքի զարգացմանը, երկար տարիներ պարզած պահելով այս կամ այն իդէայի, գաղափարի դրօշակը, և այդ բոլորի հետ միասին ենթարկվելով հազարաւոր նեղութիւնների, խաւար հալածանքների, թշնամութիւնների և զրկանքների,—գործիչը անկասկած հրճվում, վարձատրվում է, երբ իր գործունէութեան և պաշտպանած մտքերի համակրողների շրջանը շնորհակալութեան ցոյցեր է անում իրան։ Եւ յոբելեանի տօնելը՝ բացի այն որ մի բարոյական շատ մեծ վարձատրութիւն է յոբելէարի համար, ունի նաև մի առանձին կը բ թ ի չ նշանակութիւն, մի ոգևորող, ուսուցանող ոյժ ընդհանրութեան համար։ Այդ պատճառով, չէ կարելի չուրախանալ, երբ մի ժողովուրդ՝ մըտաւոր զարգացման արդէն այն աստիճանի է հասել, արդէն այնքան կեանք ունի իր մէջ, որ կարողանում է տօնել իր միջից ծնված բանաստեղծի, վիպասանի, թատրօնական գործիչի, հրապարակախօսի և այլ գործիչների յոբելեանները։ Սակայն որպէս զի այդպիսի հրապարակական տօնախմբութիւնները կարողանան ունենալ և կ բ թ ի չ նշանակութիւն, հարկաւոր է որ հասարակութիւնը գ ի տ ա կ ց ա բ ա բ վերաբերվի ամեն մի հասարակական գործունէութեան, ոգևորութեան բօղէներից յետոյ էլ պէտք է ընդ միշտ գնահատել իմանայ գաղափարը և իդէան։ Տօնել մի գործիչի յոբելեանը մի հրապարակական ժողովով, տօնել մի բանաստեղծի գործունէութիւնը մի փառաւոր ինջոյքով, փառաբանել մի մտաւոր առաքելի ուղղութիւնը «կեցցէներով», ճառերով, և ուղերձներով,—այնքան էլ դժուար չէ, և գուցէ դրա համար պէտք էլ չէ ընդհանրութեան աջակցութիւնը և միակամ մասնակցութիւնը.... Բայց ամեն մի յոբելեանի տօնախմբութիւն աւելի կրթիչ նշանակութիւն է ստանում, երբ հասարակութիւնը ինքն իր մէջ զգում է, որ ոգևորութեան բօղէների դ ե ղ ե ց ի կ խօսքերից յետոյ, պէտք է գործով ևս արտայայտել այդ գեղեցիկ խօսքերը.... Ընդհանրութեան և ապագայ սերնդի համար յոբելեանների տօնախմբութիւնը միայն այն դէպքում ունի կ բ թ ի չ նշանակութիւն, երբ դա լոկ մի արհեստական, անցաւոր ցոյց չէր։ Եւ ճշմարիտ, եթէ այսօր հասարակութիւնը կը տօնի մի բանաստեղծի յոբելեանը, իսկ վաղը կը սկսի հալածել նրա յայտնած մտքերը, կը սկսի թշնամութեամբ վերաբերվել դէպի նրա գաղափարները,—այդ կը նշանակէ, որ հասարակութիւնը իր դէմքին ծածկված ունի կեղծ դիմակ, և այդ դիմակի տակ թաղնված է մի ահռելի կերպարանք։ Եթէ այսօր հասարակութիւնը ծափահարում է իր գրականական գործիչին նրա յոբելեանի խնջոյքի ժամանակ, իսկ մի քանի օր անցնելուց յետոյ սկսում է սառն անտարբերութեամբ վերաբերվել դէպի նրա գործունէութիւնը,—այդ կը նշանակի թէ այդ երեկվայ ցոյցերը, պատահական կերպով կարգադրված բաներ էին.... Եւ վերջապէս, եթէ հասարակութիւնը տօնելով իր թատրօնական գործիչների, հրապարակախօսների, գեղարուեստական ծառայողների յոբելեանները՝ թոյլ կը տայ որ իր անտարբերութեան շնորհով ընկնի, փակվի թատրոնը, մեռնի լրագիրը, և թշուառութեան ու քաղցի մէջ յուսահատութեան հանի այս կամ այն հասարակական համակրելի գործին նուիրվածը,—այդ կը նշանակէ զրկել յոբելեանների տօնախմբութիւնը այն կ բ թ ի չ նշանակութիւնից, որը նրանք անպայման պէտք է ունենան, և որը միայն կարող է դրական և ոգևորող ազդեցութիւն ունենալ թէ գործի և թէ ընդհանրութեան վրա։

Կատարելապէս համակրելի են, կրկնում ենք, յոբելեանների տօնախմբութիւնները. այդպիսի հրապարակական ցոյցերը անկասկած մի փոքր ցնցում կը տան թմրած ջղերին,—բայց և այնպէս միայն դրանով բաւականանալ չը պէտք է և չէ կարելի։ Պէտք է ցանկանալ, որ ինտելիգէնցիան, երիտասարդութիւնը աւելի ջանք գործ դընէին տալու հասարակական գործիչների յոբելեաններին այն կրթիչ, դրական նշանակութիւնը, որով դրանք կարողանային տեղական տպաւորութիւն գործել բոլոր դասակարգերի սրտի և ուղեղի վրա, աւելի եռանդ և անընկճելի տոկունութիւն ներշնչելով հասարակական փչոտ ասպարիզի վրա ծառայող ամեն գործիչներին։

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Ապրիլի 24-ին

Չը նայելով որ այս ձմրան ցրտերը և թանգութիւնը հանարեա թէ բոլորովին կոտորեցին գիւղացու անասունները, չը նայելով որ այժմ շարունակ տեղացող անձրևները և, մի քանի տեղերում, ձիւնը խեղճ գիւղացուն արդելում են իր հողագործութիւն սկսելը, միւս կողմից էլ իրան անծանօթ զինուորական ծառայութիւնը նրան հասցրել է վերջին յուսահատ դրութեանը։

Ժողովրդագրութեան ժամանակ շատ խոշոր սխալներ են մտած երիտասարդների տարեթուերի մէջ։ Մինչև անգամ 30 և աւելի տարիք ունեցողները մտած են 20 տարիք ունեցողների մէջ և հետևաբար, պարտաւորվում են գնալ զինուորական ծառայութեան։

Այդպիսի անկանոնութիւններ մեծ մասամբ մտել են Նոր-Բայազէտի գաւառում, որտեղ կան գիւղեր 70—80 տնից բաղկացած, ուր այժմ զինուորական ծառայութեան ընդունակներ գրված են 80—90 անձնաւորութիւններ, այն ինչ Երևանը չունի այդքան զինուորացուներ։

Այս պատճառով ահա, տեղիս կօնսիստորիան ամեն օր լցված է հարիւրաւոր խնդրատուներով, որոնք աղաչում, խնդրում, լալիս են, որպէս զի մի որ և է տեղեկութիւն ստանան իրանց որդոց ծննդեան մասին կամ ծննդական վկայական ստանան զինուորական ատեաններին ներկայացնելու և ազատվելու համար։ Բայց դժբաղդաբար ուշադրութիւն դարձնող չը կայ։ Կօնսիստորիայում որտեղ ծառայողները առանց այն էլ քիչ են, ուրը փողով խնդիրներ է գրում, ուրը դրոշմաթղթեր է ծախում և, ինչպէս ասում են, հատը 5—10 կոպ. աւելի, որը մի քանի աբասի առնելով տեղեկութիւն է գտնում և տալիս իր կլիէնտին, իսկ աղքատը, որը փող չունի, վռնդվում է։ Ամեն ոք փող է պահանջում և եթէ սխալվես և իրաւամբ հարցնես թէ նա ինչու համար է փող ուզում, քեզ կը պատասխանեն, որ առանց փողի ոչ ոք չէ աշխատում. չէս ուզում, որտեղ ուզում ես գնայ և այլն։ Մի քարի օր սրանից առաջ, մինչև անգամ կօնսիստորիայից դուրս գրած խնդիրները կօնսիստորիայի ծառայողները չէին թոյլ տալիս ներկայացնելու, ասելով թէ ինչու են տալիս օտարին գրելու և ոչ իրանց, և այլն։

Ս. Առաջնորդը այժմ միայն իր խիստ կարգադրութիւնով մի փոքր այդպիսի անկարգութիւնների առաջն առել է։

Այս բաւական չէ խեղճ գիւղացու համար, որ օրերով թափված տեղիս քարվանսարաներում, խնդրում, աղաչում են, միւս կողմից էլ զանազան հին վարժապետներ, տիրացուներ կամ ծառայողներ, որոնք սովոր են գիւղացու արիւնը ծծելու, լցված են Երևան 30—40 և մինչև 100—200 խնդրագրեր բերելով հետները, որ վճարեն պահանջելի փողերը (այդպիսիները առնում են գիւղացիներից ամեն մինից 8—10 ր., որից 5 ռուբ. յօգուտ ուսումնարանի, 1 ր. 20 կ. դրոշմաթղթերի գին և միւսը իրանց վարձ) և ստանան վերջապէս գրագրական ծառայութիւնը։ Ինչպէս լինելով, ապա և իրաւանչիւր կանտօն ազատ է այդ հարցի վերաբերութեամբ։ Սակայն այստեղից չը պէտք է եզրակացնել, որ ի չարը կարող են գործ դնել այդ անկանոնութիւնը։ Բաւական է յիշել, որ սկզբունքը նոյնն է, որով առաջնորդվում են բոլոր դաշնակիցները—հայրենիքի ազատութեան և առաջադիմութեան նախանձախնդիր լինել։ Ինչ և իցէ։

Մինչև ուսումնարանական նոր կանոնադրութիւնը, որ արդէն գործադրվում է այստեղի ուսումնարաններում, կանտօնի բարձր խորհրդի այն անդամն էր զբաղված ուսումնարանական բոլոր խնդիրներով, որը լուսաւորութեան նախարարն է *)։ Չը պէտք է մոռանալ, որ բարձ. խորհուրդը քաղաքական մի մարմին է, ուրեմն և լուսաւորութեան նախարարը քաղաքական մի պաշտօնեայ, որը առանց այն էլ ծանրաբեռնված է բազմաթիւ այլ հարցերով, որոնց համար պատասխանատու է ժողովրդի առաջ։

Ի՞նչ ասել կուզէ, որ որքան և գործին նուիրված անձնաւորութիւն լինէր նախարարը, այնու ամենայնիւ, անձամբ անկարող էր մոտիկից ուսումնասիրելու այն բոլոր խնդիրները, որոնք մութեամբ վերաբերվել դէպի նրա գաղափարները,—այդ կը նշանակէ, որ հասարակութիւնը իր դէմքին ծածկված ունի կեղծ դիմակ, և այդ դիմակի տակ թաղնված է մի ահռելի կերպարանք։ Եթէ այսօր հասարակութիւնը ծափահարում է իր գրականական գործիչին նրա յոբելեանի խնջոյքի ժամանակ, իսկ մի քանի օր անցնելուց յետոյ սկսում է սառն անտարբերութեամբ վերաբերվել դէպի նրա գործունէութիւնը,—այդ կը նշանակի թէ այդ երեկվայ ցոյցերը, պատահական կերպով կարգադրված բաներ էին.... Եւ վերջապէս, եթէ հասարակութիւնը տօնելով իր թատրօնական գործիչների, հրապարակախօսների, գեղարուեստական ծառայողների յոբելեանները՝ թոյլ կը տայ որ իր անտարբերութեան շնորհով ընկնի, փակվի թատրոնը, մեռնի լրագիրը, և թշուառութեան ու քաղցի մէջ յուսահատութեան հանի այս կամ այն հասարակական համակրելի գործին նուիրվածը,—այդ կը նշանակէ զրկել յոբելեաններին տօնախմբութիւնը այն կ բ թ ի չ նշանակութիւնից, որը նրանք անպայման պէտք է ունենան, և որը միայն կարող է դրական և ոգևորող ազդեցութիւն ունենալ թէ գործի և թէ ընդհանրութեան վրա։

Կատարելապէս համակրելի են, կրկնում ենք, յոբելեանների տօնախմբութիւնները. այդպիսի հրապարակական ցոյցերը անկասկած մի փոքր ցնցում կը տան թմրած ջղերին,—բայց և այնպէս միայն դրանով բաւականանալ չը պէտք է և չէ կարելի։ Պէտք է ցանկանալ, որ ինտելիգէնցիան, երիտասարդութիւնը աւելի ջանք գործ դընէին տալու հասարակական գործիչների յոբելեաններին այն կրթիչ, դրական նշանակութիւնը, որով դրանք կարողանային տեղական տպաւորութիւն գործել բոլոր դասակարգերի սրտի և ուղեղի վրա, աւելի եռանդ և անընկճելի տոկունութիւն ներշնչելով հասարակական փչոտ ասպարիզի վրա ծառայող ամեն գործիչներին։

Խ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԱԿՆԱՐԿ ԺԸՆԵՎ ԿԱՆՏՕՆԻ ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԱՐԱՆՆԵՐԻ ՎՐԱ

—

Ամբողջ երկու տարի ուսանելով Ժընէվայում, դէպքից օգուտ քաղելով, ազատ ժամերս ես գործ էի դնում փոքր ի չատէ մոտիկից ծանօթանալու այստեղի զանազան դասակարգի ժողովրդական ուսումնարանների հետ, տեսնելու ինչ վիճակի մէջ են գտնվում մի փոքրիկ հասարակապետութեան այն հիմնարկութիւնները, ուր դաստիարակվում է նրա մատաղ սերունդը։ Մանաւանդ, ինձ աւելի էին հետաքրքրում տարրական ուսումնարանները, այն ուսումնարանները, որ, ինչպէս և ինքը զուիցերացին արդարև կոչում է, կազմում են նրա քաղաքակրթված, ազատ հայրենիքի հիմնաւոր ժայռերը։

Յարկելի ընթերցող, այսօր կամենալով փոքր ի չատէ դաղափար տալ ձեզ այդ հիմնարկութիւնների՝ տարրական ուսումնարանների վրա, ակամայից քո ներողամտութեանն եմ դիմում, վստահ լինելով, որ ներողամիտ կը լինես, եթէ փոքր ինչ կանդ առնեմ, թափելու առաջդ կրծքիս վրա ծանրացած մի բեռը։ Թերևս փոքր ինչ դիտակցութիւնս թեթևացնեմ այն տխուր մտապատկերներից, որոնք այսօր իսկ, իրանց ահռելի տեսքով դալիս շարվում են առաջս, թէև մօտ երկու տարի է անցել այն օրից, ինչ վերջին անդամ հրաժեշտ տուի մեր ուսումնարաններին, ուր երկար տարիների ընթացքում ստացել եմ այդ դառն եւ լեսոյթները։ Անչուշտ և քո դիտակցութիւնը չը լինել է այդ՝ ինձ յուզող երևոյթներին, եթէ փոքր ինչ հետաքրքրվել ես երբ և իցէ մեր ուսումնարանական գործով և մասամբ գաղափար կազմել նրանց վրա։ Ուրեմն և դու անտարբեր չես կարող լինել և ոչ ուրանալ, թէ ինչ տխուր վիճակի մէջ են գտնվում նրանք, որքան արժանի են ուսումնարան կոչվելու և ինչ թշուառ դեր են կատարում.... Եւ ես չեմ կարծում, որ գտնվեր դէթ փոքր ինչ զգայուն և ազնիւ մի անհատ, որը, այո, դէթ փոքր ինչ ծանօթ լիներ մեր այդ հիմնարկութիւններին, և ցաւ ի սիրտ չը խոստովաներ այն դառն ճշմարտութիւնը, որ նրանք չեն ծառայել իրանց կոչման—հասարակութեան պէտքերին անդամներ չեն առել և չեն տալիս։ Ուրանալ այդ, ինչպէս գիտես անել մեր՝ statu quo-ի անձնական շահերից դրդված խայտառակ երկրպագուները—նշանակում է անբարոյական լինել։ Որ մեր ուսումնարանների և ոչ միայն տարրական, այլ նոյն իսկ ինտելիգէնցիայի քթի տակին հարիւր հազար խժռող միակ դպրանոցի իսկ նեխած պատերից դուրս եկող բազմաթիւ սաները, ոչ միայն գաղափար չունեն, զուրկ են ամենատարրական գիտութիւններից, այլ հէնց նոյն իսկ իրանց՝ մայրենի լեզուի մէջ անդամ այնքան բարիկ են, որ առանց սխալի չը գիտեն գրել, այդ մի անհերքելի ճշմարտութիւն է, որը ուրանալ նշանակում է կամ կոյր լինել, այո, և կամ անբարոյական միջոցներից կուրացած։

Մեր ծիսական ուսումնարանները, որոնք իրանց չորս պատերից ամեն տարի հարիւրաւոր աշակերտներ են դուրս թողնում, ինչ են մատակարարում հասարակութեան—անպատմելոյծ եղած, անպէտք արարածներ և այդ մեծ ծառայութիւնը sic! գիտես ընթերցող, ում են նրանք մատուցանում....

—

Ինչպէս գիտես, ընթերցող, Զուիցերիան դաշնակցական ռամկապետութիւն է, քսան և երկու փոքրիկ հասարակապետութիւններից բաղկացած, որոնցից իւրաքանչիւրը ունի գրեթէ իր տեղական անկախ սահմանադրութիւնը։ Ուսումնարանական գործը ևս, եթէ կարելի է ասել, տեղական մի ինտերէս լինելով, ապա և իւրաքանչիւր կանտօն ազատ է այդ հարցի վերաբերութեամբ։ Սակայն այստեղից չը պէտք է եզրակացնել, որ ի չարը կարող են գործ դնել այդ անկախութիւնը։ Բաւական է յիշել, որ սկզբունքը նոյնն է, որով առաջնորդվում են բոլոր դաշնակիցները—հայրենիքի ազատութեան և առաջադիմութեան նախանձախնդիր լինել։ Ինչ և իցէ։

Մինչև ուսումնարանական նոր կանոնադրութիւնը, որ արդէն գործադրվում է այստեղի ուսումնարաններում, կանտօնի բարձր խորհրդի այն անդամն էր զբաղված ուսումնարանական բոլոր խնդիրներով, որը լուսաւորութեան նախարարն է *)։ Չը պէտք է մոռանալ, որ բարձ. խորհուրդը քաղաքական մի մարմին է, ուրեմն և լուսաւորութեան նախարարը քաղաքական մի պաշտօնեայ, որը առանց այն էլ ծանրաբեռնված է բազմաթիւ այլ հարցերով, որոնց համար պատասխանատու է ժողովրդի առաջ։

Ի՞նչ ասել կուզէ, որ որքան և գործին նուիրված անձնաւորութիւն լիներ նախարարը, այնու ամենայնիւ, անձամբ անկարող էր մոտիկից ուսումնասիրելու այն բոլոր խնդիրները, որոնք

*) Լուսաւորութեան նախարարութեան խորհուրդը բաղկանում է «Բարձր. խորհրդի» 6 անդամներից։

ՄԻ դպրոցական ամս՝ աշակերտներս վր է Ղեր-եան յրմա Ղեցողը է տասվի է վատ վղոծ ասա ամս՝ մոյրաս ոսեցեղեկ Նոիդէ մսդ գնդատ-որ։

Ռ՝

հայոց եկեղեցին, որ մինչև այժմ ևս մայրաքաղաքի զարդն է կազմում: Նա ունէր մի որդի, որին զրաական մեծ զոհաբերութիւնների օգնութեամբ Պոտէօմկին իշխանի մօտ ազիւտանտի տեղ տալ տուեց,—մի քայլ, որի օգնութեամբ նրա որդին կարող էր հասնել բարձր պաշտօններին: Այդ որդին մեռաւ ծաղկից 1790 թուերին: Մեզ յայտնի չէ թէ «վ ժառանգեց Լազարևի մեծ հարստութիւնը»:

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր միջից կազմակերպել է մի առանձին յանձնաժողով, որը պարտաւոր է ներկայ լինել աշակերտների տարեկան հարցաքննութիւններին: Յանձնաժողովը վերջումը պէտք է մի որոշ կարծիք ներկայացնի հոգաբարձութեանը աշակերտների առաջադիմութեան մասին:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Անցեալ շաբաթ տեղիս նահանգական դատարանում վերջացաւ մի վերին աստիճանի քննելի գործ: Մեղադրվում էր մի շամախեցի հայ, որը իր նորատիպակ կնոջ, հակառակ վերջինիս կամքին, յանձնում է մի թուրքի, որի հետ առաջուց պայմանաւորված է լինում: Երեք օր դնապակ նիստ լինելուց յետոյ, կայացաւ վճիռը, որով յիշեալ հայը դատապարտվում է երկու և կէս տարի կալանաւորների բատայում մնալու: Հարուստ թուրքը արդարացրած է: Լսում ենք, որ պրոկուրորը մտադիր է բողոքելու այդ վճռի դէմ»:

—

Օֆիցեր Միշչենկո, որի համար անցեալ համարում հաղորդեցինք թէ թատրոնում փորձել էր անձնասպանութիւն գործել և վիրաւորել էր օֆիցեր Մէսխիեվին,—կալանաւորված է, և կալանաւորութեան ժամանակ, այսօր, չորեքշաբթի, ամսիս 29-ին, նորից փորձեց անձնասպանութիւն գործել, կօշիկների չպօրներով զարկելով գլխին, բայց վրա հասած զինուորները խլել են կօշիկները: Միշչենկո թեթև կերպով է վիրաւորվել: Աւելորդ չէ ասել, որ Մէսխիեվի վէրքը վտանգաւոր չէ:

—

Վերջին ժամանակները Թիֆլիսի հասարակութեան զանազան շրջաններում առանձին խօսակցութիւնների նիւթ է դարձել Ներսիսեան դպրոցի տնտեսական դրութեան և զրական գործերի հարցը: Վերջին տարիները Ներսիսեան դպրոցի վարչութիւնը հրապարակական հաշիւ չէ տալիս. առաջ, ամեն տարի, Ներսէս Ե. կաթողիկոսի մահվան տարեդարձին, դպրոցի վարչութիւնը հաշիւ էր տալիս, և հասարակութիւնը գէթ մասամբ կարողանում էր ծանօթանալ դպրոցի զրական գործերի հետ: Այժմ այդ էլ չը կայ: Իսկ թէ ինչու Ներսիսեան դպրոցի վարչութիւնը դադարեց հաշիւ տալուց,—այդ անհասկանալի է: Հոգաբարձութիւնը կարող է նոյն իսկ տարին մի անգամ առանձին տետրակներով ապել դպրոցի զրական և այլ հաշիւները, ու տարածել ժողովրդի մէջ, որպէս զի թէ ժողովուրդը տեղեկութիւն ունենայ իր ուսումնարանի զրութեան մասին,—և թէ վերջ զրվի այն մի շարք խօսակցութիւններին, որոնք բնականաբար այժմ տեղի են ունենում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Շնէբէլ աղատվեցաւ,—և զրանով երկար երկիւղներից, կասկածներից և ենթադրութիւններից յետոյ պակասեց այն առիթներից մէկը, որոնք կարող են մի օր առաջ բերել Բէյնի հովիտներում Ֆրանսիական և գերմանական զորքերի ընդհարումը: Շնէբէլի ազատվելը առիթ տուեց եւրոպական շատ լրագիրներին յոյս յայտնելու, որ ինչպէս երևում է Վիլհելմ կայսրին կայացած հաչտութեան մասին: Եկեղեցական-քաղաքական օրէնքը, որ այնքան տարիներ մեծ պայքարի նիւթ եղաւ, այժմ համարեա վերջնականապէս ընդունված է:

—Իտալական պատգամաւորների ժողովը արձակ բացվեցաւ: Ինչպէս զրում են Հռոմից, նոր մինիստրութիւնը հէնց սկզբից ուզում է երևան հանել իր նոր նախագծերը, որոնց առիթով մեծ և ջերմ վիճաբանութիւններ և պարլամենտական աղմուկներ են սպասվում:

—Գերմանական լրագիրների հաղորդած լուրը, որ իբրև թէ Ֆրանսիական կառավարութիւնը ուզում է ոչնչացնել «Հայրենասէրների միութիւնը,» միանգամայն սխալ և անհիմն է:

—Պօլսից գրում են, որ իբրև թէ Դրումոնդ-Վոլֆ յայտնել է Բ. Դրանը, որ անգլիական զորքերը կը թողնեն Եգիպտոսը միայն հինգ տարուց յետոյ: Սուլթանի մինիստրների վրա այդ բանը շատ վատ տպաւորութիւն է թողել:

—Կրիտէ կղզու ազգաբնակութիւնը մի ուղերձով դիմեց յունական կառավարութեանը, խնդրելով միացնել Կրիտէն Յունաստանի հետ:

—Վիէննայից հեռագրում են, որ իբրև թէ Կրիտէ կղզու սահմաններին մօտեցաւ անգլիական նաւատորմը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիայի Միլան քաղաքում նորերումս մեծ աղմուկ զրեց Բամմէր ամուսինների ապահարզանի գործը: Պարոն Բամմէրը, մի հարուստ և բարձրատիճան մէկ երիտասարդ, 1876 թուին տեղափոխվեցաւ Միլան, իր մօր հետ միասին, որը մի վերին աստիճանի աչքի ընկնող գեղեցկուհի էր: 1879 թուին Բամմէր ամուսնացաւ հարուստ և մեծ կապեր ունեցող կոմսուհի Մանդոլֆոյի հետ: Զանցաւ հինգ տարի,—և ահա երկու ամուսինները կուզեին, և կինը ապահարզան պահանջեց. գործը հասաւ դատարան. բարձր շրջաններում տեղի ունեցան ամեն տեսակ խօսակցութիւններ երկու ամուսինների մասին: Դատարանը ամբողջ երեք տարի տեղեկութիւններ հաւաքեց այդ գործի մասին: Գ. Բամմէրի փաստաբանը դատարանում յայտնի Զանարդելի էր, իտալացոց այժմեան արդարադատութեան մինիստրը: Վերջապէս գործը վճռական կերպով քննվեցաւ դատարանում անցեալ մարտի վերջին: Կինը մեղադրում էր մարդուն հետևեալի մէջ. 1) որ մարդը պսակվելով չէր կամենում ամուսին լինել իր հարար, 2) որ մարդը իրան ծեծում և նեղացնում էր, և 3) որ գլխաւորն է, որ մարդը իրան անհաւատարիմ էր, միշտ յարաբերութիւն ունենալով իր հարազատ մօր հետ.... Մարդը հերքելով կնոջ մեղադրանքները, մեղադրում էր կնոջ այն բանի մէջ, որ կինը իրան չէ սիրում, որ կինը ուշադրութիւն չէ դարձնում իրանց երեխայի վրա, որ կինը չէ կամենում երեխա ունենալ, և որ, վերջապէս, կինը ուրիշի սիրուհի է և շատ թեթև բնաւորութիւն ունի: Գործի քննութիւնը տևեց մի քանի օր. քննութեանը ներկայ էր ահագին բազմութիւն: Գործի քննութեան ժամանակ հասարակութեան առաջ ներկայացվում էր պարզ կերպով բարձր շրջանի պատկանողների կեանքի տգեղ և անմիտ բովանդակութիւնը:

* * *

Չեխերէն լեզուով հրատարակվող «Humoristiske Listy» ծաղրական թերթի մէջ զետեղված է հետևեալ ծիծաղաշարժ պատկերը: Բարձր պատշգամբի վրա նստած է դամա—Ռուսաստանը կավալէր-Ֆրանսիացու հետ միասին: Բիսմարկ սերնադա է երգում դամայի համար, նուագելով մանդոլինայի վրա. այդ մանդոլինայի վրա գրված է՝ «դաշնակցութիւն»: Դաման պատասխանում է նրան. «Օտարկ, (Բիսմարկի փաղաքշական անունը), բաւական է, որքան լինձ դուրդուրեցիր. միթէ դու չես տեսնում, որ ես այժմ ուրիշ կավալէր ունեմ»....

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 ապրիլի: Սենատը Կաղլովի հասարակական բանկում տեղի ունեցած զեղծումների գործի վճիռը յայտնեց. բոլոր մեղադրեալների զանգատները մնացին առանց ուշադրութեան: Ներքին գործերի մինիստրի կարդադրութեամբ՝ «Сибирская Газета» լրագրի հրատարակութիւնը դադարեցրած 8 ամսով:—Երէկ տօնվեցաւ Բօտկինի պրոֆեսորական գործունէութեան երեսնամեակը: Ցօնախմբութիւնը՝ յօբելեարի ցանկութեամբ՝ բուն ընտանեկան լնաւորութիւն ունէր: Յօբելեարին շնորհաւորողների թւումն էին պատերազմական մինիստրը և զինուորական-բժշկական ակադեմիայի կոնֆերէնցիան: Ստացված են մեծ քանակութեամբ շնորհաւորական հեռագիրներ, ուղերձներ և ընծաներ: Կազանի անասնաբուժական ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող Նիկոլսկի՝ պրոֆէսորներից մէկին զործողութեամբ վիրաւորելու համար՝ զրված է զինուորական վարչութեան ուղղիչ զօրարաժիններից մէկի մէջ, երկու տարի ժամանակով:

ԲԵՐԼԻՆ, 28 ապրիլի: Կիսատաչտնական աղբիւրից հաղորդում են, որ հացահատիկների մաքսաարկը չատացնելու խնդիրը 'ի նկատի ունենալով, հարց է բարձրացած մի շարք միջոցներ ձեռք առնելու՝ որպէս զի տեղի չունենան այն վտանգները, որոնք կարող են ծագել հացահատիկների ներմուծութեան պակասելուց: Այս օրերս գենրալ Կաուլբարս երկար խօսակցեց Բիսմարկի հետ բոլգարական գործերի մասին, իսկ երէկ ուղևորվեցաւ Պետերբուրգ:

ԲԵԼԳՐԱԴ, 28 ապրիլի: Թագուհի Նատալիան, կոմսուհի Ցակովա անունով, մայիսի 12-ին ուղևորվելու է Եալտա՝ Թագաժառանգի ուղեկցութեամբ, որտեղ կը մնայ 6-ից մինչև 7 շաբաթ, և ապա կը վերադառնայ Բելգրադ:

ՓԱՐԻԶ, 28 ապրիլի: Հրամանագրված է, փորձի համար, մի զօրաբանակ սպառազինել, որը սահման տեղի կունենայ հոկտեմբերին, և այն էլ հարաւային կամ արևմտեան նահանգներում:

ԼՕՆԴՕՆ, 28 ապրիլի: Համայնքների ժողովին հաղորդված է, որ աւղանական էմիրը նորերումս զօրացրեց Հերատի ամրութիւնները. հաղորդված է նոյնպէս, որ բրիտանական կառավարութիւնը դեռ ոչ մի յատակագիծ չէ ընդունել՝ Կվետայի երկաթուղու մինչև Կանդահար շարունակելու վերաբերութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 ապրիլի: Հրատարակված է պետական խորհրդի հետևեալ որոշումը. նահանգական զինուորագրական ատեանը պարտաւոր է վերազննել իւրաքանչիւր մարդու, որը զանգատ կը ներկայացնի այն մասին, թէ անկանոն է եղել նրա ծառայութեան համար պիտանի լինելը որոշող զննութիւնը, կամ թէ արտաքին տեսքով հասակ որոշելը, երբ թէ մէկ և թէ միւս առարկայի մասին չէ էլ կայացել միաձայն վճիռ գաւառական ատեանում: Գանգատ տուող անձանց զօրքի մէջ ուղարկելը դադարացնվում է: Իսկ այն անձանց գանգատների հիման վրա, որոնց մասին կայացել է միաձայն վճիռ, վերազննութիւն տեղի է ունենում նահանգական ատեանի միջոցով միայն այն դէպքում, երբ այդ անհրաժեշտ կը համարվի. այս դէպքում նորակոչ զինուորի հաւաքատեղին ուղարկելը չէ դադարեցվում, իսկ վերազննութիւնը կատարում է այն նահանգական ատեանը, որը ամենից մօտ է այն բաժնին, որի մէջ նորակոչ զինուորը մտել է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 ապրիլի: Օմսկի զինուորական շրջանի շտաբի գլխաւորի օգնական գեներալ-մայոր Շչէտինին նշանակված է Սէմիպալատինսկի շրջանի զինուորական նահանգապետ Ցիկլինսկի գեներալի տեղ, որը ընդհանուր շտաբի պահեստի զօրքի մէջ է թողված:

ՓԱՐԻԶ, 29 ապրիլի: Գեներալ Բուլանժէ մի օրինագիծ մտցրեց հոկտեմբերին մի զօրաբաժնի փորձնական սպառազինութեան համար: Սպառազինութիւնը կը շարունակվի տասներկու օր և մօտաւորապէս կարժենայ 5 միլիոն ֆրանկ: Պատգամաւորների ժողովը վճռեց քննել շաբարի վերաբերեալ նախագիծը զօրքը կերպարանափոխելու նախագծից առաջ և վճռեց՝ 10 ֆրանկով աւելացնել հարկը ամեն տեսակ շաքարի իւրաքանչիւր հարիւր կիլոգրամի վրա:

ԲԵՐԼԻՆ, 29 ապրիլի: Ռէյխստագի մէջ սկսվեց օղի վրա հարկ դնելու նախագծի առաջին ընթերցանութիւնը:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 28-ին

Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ		$21\frac{1}{8}$	պէնս.	
— — Համբուրգի վրա	—	$179\frac{3}{4}$	պֆ.	
— — Փարիզի վրա	—	$222\frac{3}{4}$	սանտ.	
Ոսկի — արժէ	— —	9	»	29 կ.
Մաքսային կուպօններ	— . .	180	»	75 »
Արծաթ — —	— . . .	1	»	37 »
Բօրսային դիսկօնտներ	— . .	$4\frac{1}{2}$	»	6% »
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի		99	»	87 »
— — — — 2-րդ	—	99	»	25 »
— — — — 3-րդ	—	99	»	— »
— — — — 4-րդ	—	99	»	12 »
— — — — 5-րդ	—	99	»	— »
— — — — 6-րդ	—	—	»	— »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.		99	»	62 »
— — 2-րդ	—	99	»	87 »
— — 3-րդ	—	99	»	75 »
Ներքին 5% առաջին փոխառութ.		261	»	— »
— երկրորդ	—	240	»	— »
$5\frac{1}{2}$% բէնտա		102	»	62 »
Ոսկեայ բէնտա		196	»	75 »
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն		167	»	25 »
Նոր երկաթուղային բէնտա . .		99	»	25 »
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		169	»	— »
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .		98	»	75 »
$5\frac{1}{2}$% գրաւական թղթեր խերսոնի կալուած. բանկի.		98	»	25 »
6% Գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.		102	»	25 »
— — Պոլտավայի—	—	101	»	75 »
— — Պետ.Տուլչ.—	—	101	»	75 »
— — Կիևվի —	—	101	»	75 »
— — Մոսկվայի —	—	103	»	— »
— — Բեսարաբ. Տավր.—		101	»	25 »
— — Նիժ. Սամար.	—	101	»	75 »
— — Վիլնայի	—	101	»	62 »
— — Թիֆլիսի—27 և 43 տ.		—	»	— »
— —Ռոստայիսի-18 և 43 տ.		—	»	— »
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները		655	»	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		271	»	50 »
Ռիբինսկ-Վոլոգդայի ընկ.		101	»	75 »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.		95	»	62 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .		95	»	87 »
Օդէսայի — — .		94	»	12 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .		—	»	— »
Պետական բանկի 6-ը հրատարակութեան տոմսերը		—	»	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ֆոնդերի վերաբերմամբ ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Եւրոպայի կենտրոնումն է զտնվում, բայց և այնպէս կրում է այսօր ամեն տեսակ բռնութիւն և հալածանք գերմանական իշխանութեան կողմից. այդտեղ Էլզաս-Լոթարինգիայի խնդիր կայ, որտեղ այսօր կատարվում են անասելի երևոյթներ, որտեղ այսօր ժողովրդի յուզմունքը և համբերութիւնը իրանց վերջին կէտին են հասել: Ինչպէս երևում է, իշխան Բիսմարկ զգում է շատ լաւ կերպով թէ որքան երկիւղալի է իրերի այն դրութիւնը, որ ստեղծվեցաւ իր շնորհով, և այդ պատճառով, հասկանալի է, թէ ինչու նա ամենայն միջոց գործ դրեց պատերազմական բիւդժէաը մեծացնելու, զօրքի թիւը աւելացնելու և պատրաստութիւններ տեսնելու այն օրվայ համար, երբ Ֆրանսիան կը վճռի վերջապէս հաշիւ տեսնելու թշնամի հարևանի հետ...., Այդ պատճառով դուցէ իշխան Բիսմարկ փորձում է ճնշումները մինչև վերջին կէտը հասցնել, և՝ թուլացնել այն սէրը, որ արտայայտում է Էլզաս-Լոթարինգիան՝ դէպի մայր-Ֆրանսիան: Ցասն և հինգ տարի է արդէն, որ Էլզաս-Լոթարինգիան զիմադրում է գերմանական կառավարութեան այն ջանքերին, որոնցով ուզում են «գերմանացնել» այդ նահանգները, և հաստատ կարելի է ասել, որ մանաւանդ սրանից յետոյ այդ ջանքերը միանգամայն ապարդիւն կը մնան: Էլզաս-Լոթարինգիան միշտ իր երեսը դարձնում է դէպի Ֆրանսիան, և եթէ մի կողմից այդ բանը զրգռում, բորբքում է գերմանական կառավարութիւնը, միւս կողմից այդ ոգևորում է Ֆրանսիային և հրաւիրում է օգնութեան ձեռք մեկնել: Եւ չը նայած բոլոր դիպլոմատական քաղաքավարութիւններին, բոլոր խաղաղասիրական նշաններին, այն օրից, երբ Ֆրանսիան կը համոզվի որ Էլզաս-Լոթարինգիան ամբողջապէս իր կողմը կը բռնի դժուար բսպէին, այդ օրից արդէն Ֆրանս-գերմանական պատերազմը անխուսափելի կը դառնայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Դուբլինում նորերումս կայացաւ մի բազմամարդ միտինգ, որի ժամանակ վճռվեցաւ՝ քաղաքի հրապարակներից մէկի վրա բրօնզի արձան կանգնեցնել Գլադստոնի պատուին՝ նոյն իսկ նրա կենդանութեան ժամանակ:

—Բէլգրադից հեռագրում են, որ շուտով Սերբիայի Նատալիա թագուհին թագաժառանգի հետ միասին կուղևորվի Ղրիմ: Ինչպէս յայտնի է, թագուհին մի քանի տարաձայնութիւններ է ունեցել իր ամուսնու հետ:

—Էլզաս-Լոթարինգիայում բռնութիւնները չափից անցնում են. նորերումս այնտեղ ձերբակալվեցաւ մի մարդ, որի յանցանքը այն էր, որ ասել էր բարձրաձայն՝ «Կեցցէ Ֆրանսիան»:

—Անգլիացոց Վիկտորիա թագուհու դահը բարձրանալու յիսնամեակը տօնելու պատրաստութիւնները տեսնվում են: Վիկտորիա թագուհին ծնվել է 1819 թուին, մայիսի 24-ին: Նա բարձրացաւ Անգլիայի դահը 1837 թուի 8/20-ին: Այդ տօնախմբութիւնը, ինչպէս երևում է, շատ փառաւոր պէտք է լինի:

—Սոֆիայից, իբրև լաւ, զրում են, որ Բօդուպալով և Ստոիլով ուղում են հրաժարական տալ:

—Բելգիայի մինիստրական խորհուրդը պատերազմական բիւդժեի քննող յանձնաժողովի ուշադրութիւնը դարձրել է այն կէտի վրա, որ չը նայած խաղաղութեան արտաքին նշաններին, քաղաքական դրութիւնը դեռ չարունակում է վտանգաւոր կերպարանք ունենալ:

—Թիւրքիան զօրք է կենտրոնացնում Զերնոզորիայի սահմանների մօտ:

—Հռոմի պապի և Բիսմարկի յարաբերութիւնները այնքան արդիւնաւէտ հետևանքներ ունեցան Հռոմի համար, որ պապը նորերս փառաւոր շնորհակալութիւն յայտնեց Վիլհելմ կայսրին կայացած հաչտութեան մասին: Եկեղեցական-քաղաքական օրէնքը, որ այնքան տարիներ մեծ պայքարի նիւթ եղաւ, այժմ համարեա վերջնականապէս ընդունված է:

—Իտալական պատգամաւորների ժողովը արձակ բացվեցաւ: Ինչպէս զրում են Հռոմից, նոր մինիստրութիւնը հէնց սկզբից ուզում է երևան հանել իր նոր նախագծերը, որոնց առիթով մեծ և ջերմ վիճաբանութիւններ և պարլամենտական աղմուկներ են սպասվում:

—Գերմանական լրագիրների հաղորդած լուրը, որ իբրև թէ Ֆրանսիական կառավարութիւնը ուզում է ոչնչացնել «Հայրենասէրների միութիւնը,» միանգամայն սխալ և անհիմն է:

—Պօլսից գրում են, որ իբրև թէ Դրումոնդ-Վոլֆ յայտնել է Բ. Դրանը, որ անգլիական զորքերը կը թողնեն Եգիպտոսը միայն հինգ տարուց յետոյ: Սուլթանի մինիստրների վրա այդ բանը շատ վատ տպաւորութիւն է թողել:

—Կրիտէ կղզու ազգաբնակութիւնը մի ուղերձով դիմեց յունական կառավարութեանը, խնդրելով միացնել Կրիտէն Յունաստանի հետ:

—Վիէննայից հեռագրում են, որ իբրև թէ Կրիտէ կղզու սահմաններին մօտեցաւ անգլիական նաւատորմը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիայի Միլան քաղաքում նորերումս մեծ աղմուկ զրեց Բամմէր ամուսինների ապահարզանի գործը: Պարոն Բամմէրը, մի հարուստ և բարձրատիճան մէկ երիտասարդ, 1876 թուին տեղափոխվեցաւ Միլան, իր մօր հետ միասին, որը մի վերին աստիճանի աչքի ընկնող գեղեցկուհի էր: 1879 թուին Բամմէր ամուսնացաւ հարուստ և մեծ կապեր ունեցող կոմսուհի Մանդոլֆոյի հետ: Զանցաւ հինգ տարի,—և ահա երկու ամուսինները կուզեին, և կինը ապահարզան պահանջեց. գործը հասաւ դատարան. բարձր շրջաններում տեղի ունեցան ամեն տեսակ խօսակցութիւններ երկու ամուսինների մասին: Դատարանը ամբողջ երեք տարի տեղեկութիւններ հաւաքեց այդ գործի մասին: Գ. Բամմէրի փաստաբանը դատարանում յայտնի Զանարդելի էր, իտալացոց այժմեան արդարադատութեան մինիստրը: Վերջապէս գործը վճռական կերպով քննվեցաւ դատարանում անցեալ մարտի վերջին: Կինը մեղադրում էր մարդուն հետևեալի մէջ. 1) որ մարդը պսակվելով չէր կամենում ամուսին լինել իր հարար, 2) որ մարդը իրան ծեծում և նեղացնում էր, և 3) որ գլխաւորն է, որ մարդը իրան անհաւատարիմ էր, միշտ յարաբերութիւն ունենալով իր հարազատ մօր հետ.... Մարդը հերքելով կնոջ մեղադրանքները, մեղադրում էր կնոջ այն բանի մէջ, որ կինը իրան չէ սիրում, որ կինը ուշադրութիւն չէ դարձնում իրանց երեխայի վրա, որ կինը չէ կամենում երեխա ունենալ, և որ, վերջապէս, կինը ուրիշի սիրուհի է և շատ թեթև բնաւորութիւն ունի: Գործի քննութիւնը տևեց մի քանի օր. քննութեանը ներկայ էր ահագին բազմութիւն: Գործի քննութեան ժամանակ հասարակութեան առաջ ներկայացվում էր պարզ կերպով բարձր շրջանի պատկանողների կեանքի տգեղ և անմիտ բովանդակութիւնը:

* * *

Չեխերէն լեզուով հրատարակվող «Humoristiske Listy» ծաղրական թերթի մէջ զետեղված է հետևեալ ծիծաղաշարժ պատկերը: Բարձր պատշգամբի վրա նստած է դամա—Ռուսաստանը կավալէր-Ֆրանսիացու հետ միասին: Բիսմարկ սերնադա է երգում դամայի համար, նուագելով մանդոլինայի վրա. այդ մանդոլինայի վրա գրված է՝ «դաշնակցութիւն»: Դաման պատասխանում է նրան. «Օտարկ, (Բիսմարկի փաղաքշական անունը), բաւական է, որքան լինձ դուրդուրեցիր. միթէ դու չես տեսնում, որ ես այժմ ուրիշ կավալէր ունեմ»....

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 ապրիլի: Սենատը Կաղլովի հասարակական բանկում տեղի ունեցած զեղծումների գործի վճիռը յայտնեց. բոլոր մեղադրեալների զանգատները մնացին առանց ուշադրութեան: Ներքին գործերի մինիստրի կարդադրութեամբ՝ «Сибирская Газета» լրագրի հրատարակութիւնը դադարեցրած 8 ամսով:—Երէկ տօնվեցաւ Բօտկինի պրոֆեսորական գործունէութեան երեսնամեակը: Ցօնախմբութիւնը՝ յօբելեարի ցանկութեամբ՝ բուն ընտանեկան լնաւորութիւն ունէր: Յօբելեարին շնորհաւորողների թւումն էին պատերազմական մինիստրը և զինուորական-բժշկական ակադեմիայի կոնֆերէնցիան: Ստացված են մեծ քանակութեամբ շնորհաւորական հեռագիրներ, ուղերձներ և ընծաներ: Կազանի անասնաբուժական ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող Նիկոլսկի՝ պրոֆէսորներից մէկին զործողութեամբ վիրաւորելու համար՝ զրված է զինուորական վարչութեան ուղղիչ զօրարաժիններից մէկի մէջ, երկու տարի ժամանակով:

ԲԵՐԼԻՆ, 28 ապրիլի: Կիսատաչտնական աղբիւրից հաղորդում են, որ հացահատիկների մաքսաարկը չատացնելու խնդիրը 'ի նկատի ունենալով, հարց է բարձրացած մի շարք միջոցներ ձեռք առնելու՝ որպէս զի տեղի չունենան այն վտանգները, որոնք կարող են ծագել հացահատիկների ներմուծութեան պակասելուց: Այս օրերս գենրալ Կաուլբարս երկար խօսակցեց Բիսմարկի հետ բոլգարական գործերի մասին, իսկ երէկ ուղևորվեցաւ Պետերբուրգ:

ԲԵԼԳՐԱԴ, 28 ապրիլի: Թագուհի Նատալիան, կոմսուհի Ցակովա անունով, մայիսի 12-ին ուղևորվելու է Եալտա՝ Թագաժառանգի ուղեկցութեամբ, որտեղ կը մնայ 6-ից մինչև 7 շաբաթ, և ապա կը վերադառնայ Բելգրադ:

ՓԱՐԻԶ, 28 ապրիլի: Հրամանագրված է, փորձի համար, մի զօրաբանակ սպառազինել, որը սահման տեղի կունենայ հոկտեմբերին, և այն էլ հարաւային կամ արևմտեան նահանգներում:

ԼՕՆԴՕՆ, 28 ապրիլի: Համայնքների ժողովին հաղորդված է, որ աւղանական էմիրը նորերումս զօրացրեց Հերատի ամրութիւնները. հաղորդված է նոյնպէս, որ բրիտանական կառավարութիւնը դեռ ոչ մի յատակագիծ չէ ընդունել՝ Կվետայի երկաթուղու մինչև Կանդահար շարունակելու վերաբերութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 ապրիլի: Հրատարակված է պետական խորհրդի հետևեալ որոշումը. նահանգական զինուորագրական ատեանը պարտաւոր է վերազննել իւրաքանչիւր մարդու, որը զանգատ կը ներկայացնի այն մասին, թէ անկանոն է եղել նրա ծառայութեան համար պիտանի լինելը որոշող զննութիւնը, կամ թէ արտաքին տեսքով հասակ որոշելը, երբ թէ մէկ և թէ միւս առարկայի մասին չէ էլ կայացել միաձայն վճիռ գաւառական ատեանում: Գանգատ տուող անձանց զօրքի մէջ ուղարկելը դադարացնվում է: Իսկ այն անձանց գանգատների հիման վրա, որոնց մասին կայացել է միաձայն վճիռ, վերազննութիւն տեղի է ունենում նահանգական ատեանի միջոցով միայն այն դէպքում, երբ այդ անհրաժեշտ կը համարվի. այս դէպքում նորակոչ զինուորի հաւաքատեղին ուղարկելը չէ դադարեցվում, իսկ վերազննութիւնը կատարում է այն նահանգական ատեանը, որը ամենից մօտ է այն բաժնին, որի մէջ նորակոչ զինուորը մտել է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 ապրիլի: Օմսկի զինուորական շրջանի շտաբի գլխաւորի օգնական գեներալ-մայոր Շչէտինին նշանակված է Սէմիպալատինսկի շրջանի զինուորական նահանգապետ Ցիկլինսկի գեներալի տեղ, որը ընդհանուր շտաբի պահեստի զօրքի մէջ է թողված:

ՓԱՐԻԶ, 29 ապրիլի: Գեներալ Բուլանժէ մի օրինագիծ մտցրեց հոկտեմբերին մի զօրաբաժնի փորձնական սպառազինութեան համար: Սպառազինութիւնը կը շարունակվի տասներկու օր և մօտաւորապէս կարժենայ 5 միլիոն ֆրանկ: Պատգամաւորների ժողովը վճռեց քննել շաքարի վերաբերեալ նախագիծը զօրքը կերպարանափոխելու նախագծից առաջ և վճռեց՝ 10 ֆրանկով աւելացնել հարկը ամեն տեսակ շաքարի իւրաքանչիւր հարիւր կիլոգրամի վրա:

ԲԵՐԼԻՆ, 29 ապրիլի: Ռէյխստագի մէջ սկսվեց օղի վրա հարկ դնելու նախագծի առաջին ընթերցանութիւնը:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 28-ին

Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ		$21\frac{1}{8}$	պէնս.	
— — Համբուրգի վրա	—	$179\frac{3}{4}$	պֆ.	
— — Փարիզի վրա	—	$222\frac{3}{4}$	սանտ.	
Ոսկի — արժէ	— —	9	»	29 կ.
Մաքսային կուպօններ	— . .	180	»	75 »
Արծաթ — —	— . . .	1	»	37 »
Բօրսային դիսկօնտներ	— . .	$4\frac{1}{2}$	»	6% »
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի		99	»	87 »
— — — — 2-րդ	—	99	»	25 »
— — — — 3-րդ	—	99	»	— »
— — — — 4-րդ	—	99	»	12 »
— — — — 5-րդ	—	99	»	— »
— — — — 6-րդ	—	—	»	— »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.		99	»	62 »
— — 2-րդ	—	99	»	87 »
— — 3-րդ	—	99	»	75 »
Ներքին 5% առաջին փոխառութ.		261	»	— »
— երկրորդ	—	240	»	— »
$5\frac{1}{2}$% բէնտա		102	»	62 »
Ոսկեայ բէնտա		196	»	75 »
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն.		167	»	25 »
Նոր երկաթուղային բէնտա . .		99	»	25 »
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		169	»	— »
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .		98	»	75 »
$5\frac{1}{2}$% գրաւական թղթեր խերսոնի կալուած. բանկի.		98	»	25 »
6% Գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.		102	»	25 »
— — Պոլտավայի—	—	101	»	75 »
— — Պետ.Տուլչ.—	—	101	»	75 »
— — Կիևվի —	—	101	»	75 »
— — Մոսկվայի —	—	103	»	— »
— — Բեսարաբ. Տավր.—		101	»	25 »
— — Նիժ. Սամար.	—	101	»	75 »
— — Վիլնայի	—	101	»	62 »
— — Թիֆլիսի—27 և 43 տ.		—	»	— »
— —Ռոստայիսի-18 և 43 տ.		—	»	— »
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները		655	»	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		271	»	50 »
Ռիբինսկ-Վոլոգդայի ընկ.		101	»	75 »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.		95	»	62 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .		95	»	87 »
Օդէսայի — — .		94	»	12 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .		—	»	— »
Պետական բանկի 6-ը հրատարակութեան տոմսերը		—	»	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ֆոնդերի վերաբերմամբ ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Թիֆլիսի Թատրոնում հինգշաբթի, ապրիլի 30-ին, հայ թատրոնի բեմին համակրող հասարակութիւնը ի պատիւ քսան և հինգ ամեայ դերասանական գործունէութեան

Պ. ԳԷՈՐԳ ՋՄՇԿԵԱՆԻ

կը տայ ներկայացում դերասանական խմբի մասնակցութեամբ. I) ԿԱՐԴԻՆԱԼ ՐԻՇԵԼԻՕ դրամայի 4-դ. գործ: II) ՀԱՄԼԵՏ ողբերգութեան 3-դ. գործ. III) ՎԱՆԵՑՈՑ ԽՐԱԽՈՑՍ IV) ՊԷՊՕ կոմեդիայի 2-դ. գործ.: Կը մասնակցեն տ.տ. Փաշայեան, Սաթինիկ, Զաբէլ, Փառանձեմ: օր. օր. Ցասմիկ և Վարդուհի, պ. պ. Ադամեան, Զմշկեան, Տէր-Գրիգորեան, Միրաղեան, Տէր-Դաւթեան, Ալալեան, Աղայեան, Պարոն-Սարգսեան, Ծովակ և Ֆրանգուլեան: Սկիզբն է 7½ ժամին 2—2

ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

ՐՕՍՏՕՎ, (Դօնի վրա) ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻ

ԱԼԱՆԻԴԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Մագաղինը Դվորցովայա փողոցում, Ղալամքարովի տանը, Թիֆլիսում, պատիւ ունի յայտնելու պ. պ. ԾԽՈՂՆԵՐԻՆ և ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ փետրվարի 15-ից ներկայ թվի մինչ բաց արվիք ծխախոտի առևտուրը, որտեղ կարելի է ստանալ ԾԽԱԽՈՏԻ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ամեն տեսակները մեր գործարանից բերված: Մեր ԾԽԱԽՈՏԸ իր առանձին յատկութիւնների համար,—լաւ համ, մեղմութիւն և դուրեկան արօմատ, վայելում է երկարամեայ հռչակ և մեծ տարածութիւն Ռուսաց կայսրութեան և արտաքսահմանի շատ քաղաքներում:

Թիֆլիսում նոյնպէս և Անդրկովկասում մեր ֆաբրիկայի ծխախոտի արդիւնքները մինչև այժմ յայտնի չէին, այդ պատճառով մենք բաց արվինք ծխախոտի մագաղինը, ցանկանալով այդ մեր արդիւնքները երկրի մէջ մտցնել:

Խոնարհաբար խնդրում ենք պ.պ. ծխողներին և վաճառականներին անտես չառնել ծանօթանալու մեր ֆիրմայի արդիւնքների հետ:

Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են շուտ և ճիշդ կերպով, փոստի ծախսը մագաղինի վրա է: Պրէյսկուրանտները ցանկացողներին տնվարձ են ուղարկվում:

☛ Պ.Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՆՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԶԻՋՈՒՄՆ:

ԱԼԱՆԻԴԻ *եղբայրներ* 1—25

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, մայիսի 13-ին, ՄԷՆԳՐԷԼԻԱ (MINGRÉLIE) *շոգենաւը, նաւապետ* ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) *դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, Նախկին Արծրունի գալերէում,* № 103. 1—4

ՀԻՆԳՇԱԲԹԻ 30-ին ապրիլի, ՆԻԿԻՏԻՆԻ ՑԻՐԿՈՒՄ պարսկական պալատական արտիստ

ՐՕԲԻՐՏ ԼԷՆՑ

Պատիւ կունենայ տալ ՎԵՐՋԻՆ ՄԵԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ, բոլորովին նոր պրոգրամայով, երեք հետաքրքիր, և մեծ բաժանմունքներով, անուանված՝ **ԵՐԵՔ ԺԱՄ ԿԱԽԱՐԴԱԿՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ:** *Ուրիշ բազմաթիւ և հետաքրքիր փորձերի թւում այդ երեկոյ կը կատարվեն երկու մեծ և շքեղ փորձեր.*

1) ՄԱԳՆԵՏԻԶՄԻ ՈՅԺԸ, *կամ* ՇԱՐԺՎՈՂ ՍԵՂԱՆ
2) ՍՊԱՆԻԱԿԱՆ ԻՆՎԱԼԻԴՅԻԱՅԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ *կամ* ՊԱՏԺԻ ՇՈՒՏԱՓՈՅԹ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ:

ՍԿԻԶԲԸ 8 *ժամին երեկոյեան:*

Վաղօրօք տոմսակները կարելի է ստանալ Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Նադէլի շտէմպէլների ֆաբրիկայում, Մուխրանսկու տանը: Մանրամասնութիւնները աֆիշներում: 1—1

ՈՒՍՈՒՄՆՄՐԱՆ—ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Երկու սեռի մանուկների համար

ՕՐ. Ս. Վ. ԱՐԳՈՒԹԻՆՍԿՈՒ

Տեղափոխվում է ամառ ժամանակ ԿՕՋՕՐ: Տղաներին կլասիական Գիմնազիայի և Կադէտների Կորպուսի ստորին դասատները պատրաստելու համար, նոյնպէս աղջիկներին իգական Գիմնազիա և Ինստիտուտ պատրաստելու համար՝ ուսումնարանում կը լինի ուսուցիչների և ուսուցչուհիների պահանջվող կազմակերպութիւնը:

Ֆրանսիական լեզուի մէջ վարժվելու համար երեխաների հետ կը լինի մի ֆրանսիուհի:

Արձակուրդների ժամանակի համար երեխաների ընդունելութիւնը սկսվելու է 26-ից ապրիլի: 2—5

ՆՈՐ ԳԻՐՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ.)

ՀՈՂԱՑԻՆ ԵՒ ԱՆԶՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 *ղրջան: Գինը 35 կ: Թիֆլիսի ղրավաճառանոցներում: 10 աւելի առնողներին 20% զիջումն կը լինի կենտրոնական ղրավաճառանոցում:* 30—30

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"

(Вѣнскій магазинъ)

Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Մղիվանիի տանը.

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որ մօտ օրերս ստացայ ՎԻԷՆՆԱՅԻ, ՎԱՐՇԱՎԱՅԻ և ՄՕՍԿՎԱՅԻ ամենաառաջնակարգ գործարաններից մեծ քանակութեամբ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆՆԵՐԻ գարնանային և աշնանային պատրաստի ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի:

Գները ամենի համար ՄԱՏՉԵԼԻ և ձեռնտու են:

Վ. Խուդավերդեանց 6—10

ՊՐՕՎԻԶՈՐ **Ա. ՇՏԷԼԼԷՐԻ** ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՒԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. *ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվկու և Ադմուրովի դեղատներում: ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ Բէկկէրի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ:* (Հ.)

Hotel Nemecki Edmunda Dziechcinskiego, Warszava, Ulica Dluga, № 31.
(Нѣмецкая гостинница Эдмунда Дзехцинскаго, въ Варшавѣ, Долгая улица, № 31).

Պ. Էդմունդ Դզեխցինսկու «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑԸ» Վարշավայում, գտնվում է քաղաքի կենտրոնում, գլխաւոր կառավարչական տեսակների, թատրոնների և առևտրական կենտրոնական տեղերի մօտ:

90 սենեակներ, 30 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական գնով: Բէֆտօրան և քաղցրեղէնների խանութ: Ճաշը 30 կօպէկից մինչև 1 ռուբլի: Կառքեր և դիլիժանսներ դէպի բոլոր երկաթուղիները: Կառքերի վարձը շատ էժան:

Գրադարան և օտար լրագիրներ՝ ծրիապէս հիւրերի համար: «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑԸ», որ յաճախված է բազմաթիւ հիւրերով Թիֆլիսից և նրա շրջականներից, ստանում է այդ հիւրերի համար հայոց «ՄՇԱԿ» լրագիրը: (Հ.)

Въ редакціи газеты „МШАКЪ" продаются слѣдующія брошюры:

1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ", публич. лекція Д—ра Григорія Арцруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.

2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.

3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ", или Tiflis, Redaction „Mschak".

(Հ.)

47—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова, во дворѣ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, նախկին Շաբուրովի տանը, բակում)

ՆԵՐԿԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՆԵՐԿԵՐ զանազան գոյնի, թէ չոր և թէ խլզով պատրաստած. նոյնպէս և հեղուկ ներկեր, որոնք բոլորովին պատրաստ են գործածութեան համար:

ԷՄԱԼ *կազմող սպիտակ ներկ:*
ԻՒՂ, *կտաւատի և կանէփի թէ հում և թէ եփած:*
ԿՏԱՒ *ներկեր և սվնակներ նկարիչների համար:*
ՎՐՁԻՆՆԵՐ, *խոզանակներ, աւելներ, սպունգներ և դեղավաճառութեան ուրիշ պիտոյքներ:*

ԹՈՅԼՏԻՒՐԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց: Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Բալզամ—Eugénie. դափնեա և պակի փուռջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կոսմետիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր: Բերթա Բիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու սմնն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-ղիցերինեան պօմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձեռքերի պօմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա դնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, չադանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիս Գուամանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը: 92—100

Дозволено цензурою, Тифлисъ 29 Апрѣля 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз